ուած են տաճարի հարաւային պատին (պատկ. 174ա)։

Այստեղ ընդհատուում են դարձեալ մեր տեղեկութիւնները վանքի մասին մինչև ԺԷ. դարի սկիզբը. 1603 թուին Հաւուց Թառի և Խոր վիրապի Մանուէլ եպիսկոպոսի հետ յիշւում է և Գեղարդի Աստուածա-

Պատկեր 172.

տուր եպիսկոպոսը իբրեւ կուսակից Մելքիսեդեկ եւ Դաւիթ կաթուղիկոսների, որ անյաջող բանակցութեան մէջ մտան Սրապիոն Ուռհայեցու հետ Զուղայում։ Ապա Աստուածատուր եպիսկոպոսը Հաւուց Թառի Մանուէլ եպիսկոպոսի և Մելքիսեդ կաթուղիկոսի հետ Տաթեւից Սպահան գնացին Շահ Աբասին Երեւան հրաւիրելու, կամակից հանդիսանալով նորա որոշմանը։ Իսկ մեծ գաղթի ժամանակ նա ևս Հաւուց Թառի Մանուէլ եպիսկոպոսի հետ փակուեցաւ Գեղարդի ձորի մի այրում, որտեղից ցած բերուեցաւ և սպանուեցաւ Ամիրգունայ խանի զօրքի կողմից(*)։

Յովհաննէս Վարագեցին 1604 թուին նորոգում է Մխիթար Այրիվանեցու մեծ ճառընտիրը, Ղուկասի վերջում 29բ. գրելով իւր յիշատակարանը(**)։ Այնուհետև 1629 թուին յիշւում է Յովհաննէս եպիսկոպոս Սրկղոնից. այդ աւանը իւր եկեղեցիներով Պռոշեանց սեպհականութիւնն էր, Պռոշեանց բաժին Վայոց ձորի հետ (մի մասը Օրբէլեանների սեպհականութիւն էր) և Գեղարդի եպիսկոպոս էր։ Ուշադրութեան արժանի է, որ յիշատակարանը թուագրուած է «ի կաթուղիկոսութեան սուրբ Էջմիածնայ տէր Մելքիսեթի», մինչդեռ նա վախճանուած էր 1628 թուին Լեհաստանի Իլով (Լեմբերգ) քաղաքում. երեւի, Սրկղոնքում դեռ ևս լսած չէին նորա մահը(*)։ Սորա ժամանակ էր, երբ 1628 թուին, Պոլսում «ձեռամբ Թոխաթցի Միքայէլի» գրուած մագաղաթի բոլորգիր աւետարանը յետին ստացող մահտեսի Յարութիւնը «եդ յիշատակ. ՅԾամուխս սբ. Գեղարդայ իւր հոգւոյն և ծնողացն»(**)։

Յովհաննեսի յաջորդն էր Դաւիթ վարդապետ Պռոշեանց տոհմից, որի առաջնորդութիւնն սկսւում է 1635 թուին և մեռնում է 1675 թուին(***)։ Վերջերս Աշ-

Պատկեր 173.

տարակից մատենադարանում ստացուած մի քայքայուած Յայսմաւուրքի գրութիւնը թուագրուած է ի միջի այլոց և սոյն Դաւիթ եպիսկոպոսի անունով. «եւ

(*) Առաքել Դաւրիժեցի, 1896. Վաղարշ. 12, 17, 47-49։ Շահ Աբասի արշաւանքն ու նորա հրամանով կատարուած արտագաղթը սրտաճմլիկ և աղեկտուր տեսարաններով նկարագրում են և յիշատակարանները. օր. Ձեռ. Էջմ. № 519, 74ա.։

(**) Ձեռ. № 944/1500, 29բ. «Վարագեցի Յովանէս կապող եւ կազմող սբ. մատենիս թվ. ՌԾԳ ի սուրբ ուխտս Այրիվանք ընդ հովանեաւ գեղեցկաշէն սբ. Աշծծնի տաճարին . . .»։

(*) Տես Յաւել. Բ. 7։

(**) Ձեռ. Էջմ. № 269/291։

(***) Խաղբակեանք. Ա. 257։